**Արձանագրության 3**

**Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Քուչակ թաղամասի 47 և 48 շենքերի հարևանությամբ այգու տարածքում գտնվող ֆուտբոլի դաշտի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԳՀԾՁԲ-18/94 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

24.10.2018թ.
ժամը՝ 10:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Կիրակոսյան /գնահատող/, Կ. Հարությունյան/գնահատող/
Ա. Հարությունյան /բացող/, Ս. Կոտոլիկյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

**1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին**

---

(Տ. Իգիթյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված չափը /գերազանցում է ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը/:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել առաջին տեղ զբաղեցնող մասնակցի հայտը՝ համաձայն Կարգի 44-րդ կետի:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:*

**2. 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասին**

---

(Տ. Իգիթյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետով ընդունված որոշումը՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

**3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին**

---

(Տ. Իգիթյան)

3.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ 24.10.2018թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

**4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

---

(Տ. Իգիթյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3-րդ կետում նշված փաստաթղթերի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ------------------------------------ Տ. Իգիթյան

Անդամներ՝ ------------------------------------ Կ. Հարությունյան

------------------------------------ Ա. Կիրակոսյան

------------------------------------ Ս. Կոտոլիկյան

------------------------------------ Ա. Հարությունյան

Քարտուղար՝ ------------------------------------ Ա. Համբարձումյան